

- (i) վնասակար կամ շահագործման ձևով օգտագործվող հարկադիր աշխատուժի¹, ինչպես նաև մանկական աշխատուժի² ներգրավմամբ իրականացվող արտադրություն կամ այլ գործունեություն,
- (ii) տվյալ երկրի օրենքների, կանոնակարգերի կամ միջազգային կոնվենցիաների կամ պայմանագրերի համաձայն ոչ օրինական, ինչպես նաև միջազգայնօրեն արգելված ապրանքների արտադրությունը և վաճառքը, ինչպես օրինակ՝ (ա) դեղամիջոցներ,³ պեստիցիդներ հերբիցիդներ,⁴ (բ) օզոնային շերտը վնասող միջոցներ,⁵ (գ) պոլիքլորացված բիֆենիլներ⁶ և այլ վնասակար քիմիական նյութեր,⁷ (դ) կենդանական մթերքներ, որոնք կարգավորվում են Վայրի Կենդանական և Բուսական Աշխարհի վտանգված տեսակների միջազգային առևտրի համապատասխան կոնվենցիայով,⁸ և (ե) թափոնների կամ թափոններից ստացված արտադրանքի անդրսահմանային առևտուր,⁹
- (iii) զենքի, զինամթերքի և ռազմականացված նյութերի արտադրություն և առևտուր,
- (iv) բացի գինուց և գարեջրից՝ այլ ալկոհոլային խմիչքների արտադրություն և առևտուր,¹⁰
- (v) ծխախոտի արտադրություն և առևտուր,
- (vi) դրամախաղեր, խաղատներ և այլ նմանատիպ գործունեություն,
- (vii) ռադիոակտիվ նյութերի, ներառյալ ռեակտորների և դրանց կոմպոնենտների արտադրություն և առևտուր,
- (viii) ասբեստային չկապակցված մանրաթելերի արտադրություն, առևտուր կամ օգտագործում,¹¹
- (ix) անտառահատման գործընթացներ կամ դրանց նպատակով տեխնիկայի ձեռքբերում առաջնային արևադարձային խոնավ անտառներում կամ հին աճեցված անտառներում օգտագործման նպատակով և
- (x) ծովային և ափամերձ ձկնորսություն, որը կարող է վնասել զգայուն և պահպանվող տեսակներին մեծ ծավալով, ինչպես նաև ծովային կենսաբազմազանությամբ:

¹ Հարկադիր աշխատանքն իրենից ներկայացնում է վախեցնելու կամ այլ կերպ ստիպելու միջոցով անհատներին՝ իրենց ցանկությանը հակառակ աշխատացնելը.

² Մանկական աշխատանքը նշանակում է այն երեխաների աշխատուժի օգտագործումը, ովքեր փոքր են տվյալ երկրի օրենսդրության համաձայն սահմանված աշխատելու իրավունք ունենալու նվազագույն տարիքից կամ երեխաների աշխատուժի օգտագործումը Աշխատանքի Միջազգային Կազմակերպության 138-րդ կոնվենցիայով (<<Նվազագույն տարիքի կոնվենցիա>>) սահմանված նորմերին ոչ համապատասխան կերպով (www.ilo.org),

³ Արգելման ենթակա դեղամիջոցների ցանկը հասանելի է <http://www.who.int> էլեկտրոնային հասցեում,

⁴ Արգելված պեստիցիդների և հերբիցիդների ցանկը հասանելի է <http://www.pic.int> էլեկտրոնային հասցեում,

⁵ Ցանկը հասանելի է <http://www.unep.org/ozone/montreal.shtml> էլեկտրոնային հասցեում,

⁶ Չափազանց թունավոր քիմիական նյութերը, պոլիքլորացված բիֆենիլները կարելի է հանդիպել 1950-1985 թվականների արտադրության յուղով լցված էլեկտրական տրանսֆորմատորներում, կոնդենսատորներում և կոմուտացիոն սարքավորումներում,

⁷ Վնասակար քիմիական նյութերի ցանկը բերված է <http://www.pic.int> էլեկտրոնային հասցեում,

⁸ Ցանկը հասանելի է <http://www.cites.org> հասցեում,

⁹ Համաձայն Բազելյան կոնվենցիայի՝ <http://www.basel.int> էջում,

¹⁰ Մա չի վերաբերվում ենթածրագրի հովանավորներին, ովքեր էականորեն ներգրավված չեն այս գործունեության մեջ,

¹¹ Այս կետը չի վերաբերում ասբեստի 20%-ից ցածր պարունակությամբ ասբեստա-ցեմենտային թիթեղների ձեռքբերմանը և օգտագործմանը: